ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՁԵՐ ԾԱՆՈԹՆԵՐԸ

Երևան 2019

Կազմողներ՝ Ս. Ղազարյան, Ա. Եղիազարյան
Նկարչական ձևավորումը՝ Լ. Շարամբեյանի
Էջադրումը՝ Մ. Խաչատրյանի

ՆՎԻՐՎՈՒՄ Է ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ *150*

ԵՎ

Պ. ՍԵՎԱԿԻ *95* ԱՄՅԱԿՆԵՐԻՆ

© Արմեն Ղազարյան, 2019
© Հովհ. Թումանյանի թանգարան, 2019

ISBN 978-9939-858-22-7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էշը 4
Շունն ու գայլը 7
Նորից շունն ու գայլը 9
Ուղտն ու ծիտը 12
Չթչթանը 14
Կապիկը 17
Վագրն ու կատուն 19
Չղջիկը 21
Մանուշակը 27
Կաքավը 29
Արագիլը 32
Հայոց լեռները 36

ԷՇԸ

Ով ստեղծեց գազաններին,
Թռչողներին, վազաններին,
Ամեն մեկին անուն դրեց,
Անուն դրեց
Ու խնդրեց՝
Չմոռանալ անունն իրենց։

Եվ ցրվեցին ու հեռացան,
Անունն իրենց չմոռացան։

Միայն մեկը եկավ ձորից,
Իր անունը հարցրեց նորից։

Ստեղծողը քնքշանքով
Ասաց. «Էշ է անունը քո»։

Էշը գնաց։
Երկու օրից
Վերադարձավ Էշը նորից.

Մոռացել էր իր անունը։
Նորի՛ց գնաց,
Եկավ նորի՛ց,
Ու կրկնվեց նորից նույնը.
Մոռացել էր իր անունը։
«Քո անունը Էշ է, Իշուկ։
Երկու տառ է, ո՞նց չես հիշում»։

Բայց այդպես էլ նա չհիշեց,
Ու ետ եկավ մի օր նորից։
Եվ այս անգամ մի լա՛վ քաշեց
Ստեղծողը ականջներից։
Քաշեց, ասաց. «Անունդ Է՛շ է»,
«Անունդ Է՛շ է», — ասաց, քաշե՛ց։

Եվ այն օրից խելոք էշը
Իր անունը արդեն հիշեց.
Է՛լ հարցնելու կարիք չկար,
Բայց ականջը... մնաց երկար։

ՇՈՒՆՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Ով ստեղծեց գազաններին,
Թռչողներին, վազաններին,
Ուներ-չուներ՝ ծով բարություն,
Նա շատ երկար չափեց-ձևեց
Ու շներին մեծ ուժ տվեց,
Իսկ գայլերին՝ հոտառություն:

Գայլը դաշտում տեսավ Էշին,
Խեղդե՛ց, հաղթե՛ց, հպարտացա՛վ:
Բայց հանդիպեց երբ Գոմեշին,
Տեսավ, որ գործը բարդացավ.
Գոմեշն այնպես պոզահարեց,
Որ խեղճ Գայլի սիրտը մարեց:
Ու մտածեց Գայլը երկար,
Որ ուժեղից ուժեղն էլ կար:

Երբ որ Գայլը եկավ ուշքի,
Ստեղծողին ասաց ուժգին.
«Հոտառության մեջ ի՞նչ կա որ...
Ո՛ւժ տուր, ո՛ւժ է ինձ հարկավոր»:

Նա էլ զարկեց իր ծնկներին,
Էլ ո՛չ չափեց, ո՛չ էլ ձևեց,
Շան ուժն առավ՝ Գայլին տվեց,
Հոտառությունն էլ՝ շներին:

Տարիներ են եկել-անցել,
Գայլն իր ուժով մինչև հիմա
Էլի՛ նույն գայլն է մնացել՝
Նո՛ւյն սովածը ձմեռ-ամառ,
Նո՛ւյն որսորդի ահ ու մահով,

Այնինչ շունը իրեն համար
Ստեղծել է կյանք ապահով՝
Ոչ թե ուժով կամ բռնությամբ,
Այլ նուրբ ու սուր հոտառությամբ:

ՆՈՐԻՑ ՇՈՒՆՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Կար մի ժամանակ, որ Գայլի ցեղը
Հենց ինքն էր ապրում շների տեղը.
Ապրում էր Գայլը մարդկանց բակերում,
Իսկ Շունն՝ անտառում, քարի տակերում:
Գայլերին մարդն էր հաց ու թաց տալիս,
Իսկ Շունը ինքն էր իր օրը լալիս:

Եվ քարում-սարում ու հին անտառում
Շատ շներ էին շուտ հիվանդանում.
Մեկ տեսար՝ հարբուխ, մեկ՝ գրիպ, մեկ՝ հազ, —
Ամեն օր մի նոր ցավ էր անպակաս:

Ու շա՛տ խնդրեցին մի օր շները
Գայլուկ եղբոր հետ փոխել բները.
— Անտառում ապրեք միառժամանակ,
Իսկ մենք՝ խեղճերս, մարդկանց մոտ մնանք:

Գայլ եղբայրները նրանց խղճացին,
Իսկ հետո իրենք... հազա՛ր զղջացին.

Իրենց նոր կյանքը, հոտած բները
Ծա՛տ հավանեցին նորեկ շները։
Քիչ խանգարում էր լոկ շղթան վզի,
Բայց հացի հո՛տը, բա հա՛մը մսի։
Ավելի լավ չէ՞ վզների շղթան,
Քան սոված-ծարավ դես ու դեն վազ տան,
Դողդողան ցրտից, փոշտան, հազան,
Ի՞նչ է թե կոչեն անշղթա գազան,
Եվ ազա՛տ կոչեն։
Չէ՛, հիմար հո չեն...

Ու խելոքացած առողջ շները
Է՛լ չթողեցին իրենց բները։
Իսկ խեղճ գայլերն էլ մնացին դրսում։

Երբ նրանք շատ են քաղցում ու մրսում,
Մինչև հիմա էլ ոռնում են դրսում
Եվ այդ ոռնոցով հարցնում շներին.
«Բա չլավացա՞ք, բա ետ չեք դառնո՞ւմ»։

Շներն էլ՝ «հա՛ֆ-հա՛ֆ», իրենց բներից
Ասում են «չէ՛-չէ՛», տեղից վեր թռնում,
Քաշում են իրենց վզների շղթան,
Որ այդ աներես գայլերին վախ տան,
Թե իզուր տեղը ի՞նչ են հա՛ ոռնում...

ՈՒՂՏՆ ՈՒ ԾԻՏԸ

Ով ստեղծեց գազաններին,
Թռչողներին, վազաններին,
Երբ որ հերթը Ուղտին հասավ,
Ուղտին տվեց բա՛րձր հասակ,
Մեջքը՝ շատ հա՛րթ ու հավասա՛ր,
Ոտքը՝ երկա՛ր, բայց ո՛չ բարակ,
Վիզն էլ՝ սիրուն մի աշտարակ:



Եվ մի օր Ստեղծողը
Ուզեց բոլոր զավակներին
Իր մոտ կանչել,
Լավ ճանաչել:

Հավաքելն էլ դժվար բան չէր.
Սրան ճամփեց՝ նրա՛ն կանչի,
Նրան ճամփեց՝ սրա՛ն կանչի:

Ուղտն էլ գնաց ծտին բերի.
«Քեզ կանչում են, դե՛, շո՛ւտ արի»:
Իսկ ծիտն ասաց.
«Սրա՞ն դու տես,
Մի այնպիսի՛ քացի կուտես,
Որ յոթ տապակ կպտըտես»:

Նայեց ծտին Ուղտը հսկա
Ու ծիծաղեց Ուղտը քահ-քահ,
Ու ծիծաղեց հսկան այնքա՞ն,
Որ ծիծաղից գետին փռվեց:
Ու ծիծաղից... վի՛զը ծռվեց,

Մե՛ջքը ծռվեց,
Ո՛տքը ծռվեց:
Վիզ, մեջք ու ոտ ծռվեց գնաց
Եվ այդպես էլ... ծռված մնաց...